

ըստ Աստուծոյ հաճոյիցն, աւրինեալք ամենեքեան ի բերանոյ սուրբ կաթողիկոսին Գիւտայ:

**ԿԲ.** Քանզի յետ կատարման սրբոյ կաթողիկոսին<sup>1</sup> Յովսէփայ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Յայոց տեր Մելիտէ, որ էր յազգէն Մանազկերտեցեացն. եւ զհետ նորա տեր Մովսէս, որ էր եւ նա ի նոյն ազգէ: <sup>2</sup> Եւ ապա ըստ Աստուծոյ տեսչութեանն յաջորդեաց զկաթողիկոսութիւն աշխարհիս Յայոց տեր Գիւտ, որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ, այր լի գիտութեամբ հայոյս եւ առաւելեալ յունիւն, յորդասաց բանիւ եւ առատաբուղի<sup>2</sup> վարդապետութեամբ. զոր ոչ երբէք արգելոյր անգիտութեանն տկարութիւն, այլ զծածուկս ասացեալ Յոգւոյն՝ նոյն սուրբ Յոգւոյն շնորհ յայտ արարեալ նովալ՝ լուսաւորապէս ուսուցանէր բովանդակ ժողովրդոց. որոյ բանք իւր նման յորդառատ անձրեւի զամենայն լսողի ծաղկեցուցեալ պտղաբերէր զոգիս:

<sup>3</sup> Եւ զմնացեալ դեռեւս ի տղայութեան հասակի<sup>3</sup> զորդիս նահատակելոցն ընդ սրբոյն Վարդանայ, որք ի նոյն տոհմէ Մամիկոնէիցն էին եւ կամ որք ի տոհմէ Կամսարականացն եւ կամ յայլ ազգաց<sup>4</sup>, կանայք նահատակելոցն արանց եւ կապելոց ի դրանն, թեպէտ եւ ի նեղութեան էին, սակայն ուսուցեալ եւ բազում հոգոյութեամբ ուսուցանել տուեալ եւ խրատեալ՝ ոչ իբրեւ զանփոյթս<sup>5</sup> եւ զանպիտան կանայս, այլ իբրեւ զքաջայրս՝ զառաջիկայ զաւգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին: <sup>4</sup> Եւ մանաւանդ կին նահատակին Յմայեկայ Մամիկոնէի եղբար սրբոյն Վարդանայ, որ եղեւ կին անուանի եւ առաւելեալ ամենայն լաւ եւ մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Յայաստան աշխարհիս. որ սնոյց եւ խրատեաց զորդիսն իւր յաշխարհին Վրաց, ի տան Աշուշայի Վրաց բղեշխի, զորս բղեշխն Վրաց Աշուշայ ինդրեաց պարգեւս<sup>6</sup> ի յարթայէն Պարսից Յազկերտէ, ըստ առաջագրելոցն կարգի, եւ ածեալ ետ ցմայրն իւրեանց, որում անուն էր Ձուկի. վասն զի զքոյրն Ձըւկայ ունէր ի կնութեան բղեշխն Վրաց Աշուշայ, որում անուն էր Անուշվոմամ: <sup>5</sup> Եւ սնուցեալ անդ մանկունքն եւ ուսեալ՝ յառաջադէմք էին յամենայնի եւ հռչակաւորք. որք մինչ դեռեւս ի տիս մանկութեան էին՝ ամենայն տեսանող մտաց երեւէին աջողակք եւ զարմանալիք. որում անուն էր առաջնոյն Վահան, եւ երկրորդին Վասակ, եւ երրորդին Ար-

1 ՏՏ. սուրբ կաթող...

2 Ձ. առատաբուղի

3 Ձ. դեռ տղայութեան հասակիս

4 Ձ. յայլ ազգեաց

5 ՏՏ. զանփոյթ

6 Ձ. պարգեւ